ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 1999 թվականի ապրիլի 14-ին

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 37.1. Նախադպրոցական, միջնակարգ և մասնագիտական այդ թվում՝ բարձրագույն կրթության բնագավառներում վերահսկողությունը

1. Նախադպրոցական, միջնակարգ և մասնագիտական այդ թվում՝ բարձրագույն կրթության բնագավառներում պետական վերահսկողությունն ապահովում է օրենքով ստեղծված համապատասխան տեսչական մարմինը կանխարգելիչ, վերահսկողական, հետադարձ կապի ապահովման և օրենքով սահմանված այլ գործառույթների միջոցով:

2. Կրթության ոլորտի տեսչական մարմինն իրականացնում է ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից նախադպրոցական, միջնակարգ և մասնագիտական այդ թվում՝ բարձրագույն կրթության ոլորտներում օրենսդրության, այդ թվում՝ կրթության պետական չափորոշիչների և կրթական ծրագրերի պահանջների պահպանման վերահսկողությունը «(ստուգման, տեսչավորման և օրենքով սահմանված այլ ձևերով)», ինչպես նաև խորհրդատվական և կանխարգելիչ գործառույթների միջոցով նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպման, դրանց յուրացման ու կրթության որակի բարձրացման գործընթացներին:

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գործառույթների արդյունավետ իրականացումն ապահովելու համար ուսումնական հաստատությունները և կազմակերպությունները օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները ներկայացնում են կրթության ոլորտի տեսչական մարմին:»: